

ՄԵՊՏԵՄԲԵՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	10
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	12
2.5. Ջրաչափեր	13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	14
3. Տեխնիկական տնօրինություն	15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	16
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	17
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	19
3.4. Ջրատար համակարգի բարելավում	19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	22
3.6. 1-85 թեժ գիծ	23
4. Լրատվական ծառայություն	24
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	26
5.1. Դասընթացներ/սեմինարներ	27
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	29
5.3. Բժշկական զննություններ և հետազոտություններ	29
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ	30
5.5. ԲՆԿ ստանդարտների ինքնազննահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՆԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և աղապտացման աշխատանքներ	30
5.6. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ	30

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես.

● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Վարդաշեն 4 փողոցով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագիծը գտնվում էր քայքայված, վթարային վիճակում: Տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է $D=75$ մմ $L=25$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով:



Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես.

Վայոց ձորի մարզ

● «Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնքի, Շատին բնակավայրի 19-րդ փողոցում, 4-րդ և 2-րդ փակուղիներում կառուցվել է նոր $d=50$ մմ $L=450$ գծմ, $d=20$ մմ, $L=150$ գծմ պեթ ջրագիծ, կատարվել են տնային միացումներ, տեղադրվել են թվով 28 պոլիմերավազային դիտահոր և $d=15$ մմ փականներ:



Մյունիքի մարզ

● «Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում ք.Միսիան, Երիտասարդական և Ա.Մանուկյան փողոցներում իրականացվել են $d=20-110$ մմ, $L=1403$ գծմ ջրագծերի վերակառուցման աշխատանքներ: Նշված փողոցները սնող $d=20-90$ մմ պողպատե ջրագծերը կառուցված են եղել 1980-ական թվականներին՝ ստանդարտներին չհամապատասխանող խողովակներով, որոնք գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար: Վերոնշյալ փողոցներում տեղադրվել է թվով 40 պոլիմերավազային դիտահոր, նոր տեղադրված խողովակներից 40 բաժանորդի համար իրականացվել են տնային միացումներ, ապամոնտաժվել և նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել է թվով 40 $d=15$ մմ և $d=20$ մմ ջրաչափ, կառուցվել է թվով 2 բաժանարար հանգուց, տեղադրվել է թվով 2 դիտահոր բաժանարար հանգույցներով, բաժանարար հանգույցներում տեղադրվել է թվով 3 $d=100$ մմ փական: Կատարված աշխատանքների արդյունքում Միսիան քաղաքի Երիտասարդական և Ա.Մանուկյան փողոցներում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 15լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում: Ընդհանուր առմամբ կառուցվել են $d=20-25$ մմ $L=304$ գծմ, $d=110$ մմ $L=1100$ մ պեթ ջրագծեր, շահագործումից հանվել են $d=20-90$ մմ $L=900$ գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծեր:



Գեղարքունիքի մարզ

«Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում ք.Մարտունի, Աբովյան փողոցում և Աբովյան փողոցի նրբանցքներում, փակուղիներում իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ, քանի որ նշված փողոցի $d=530-150$ մ գործող մետաղական ջրագծերը կառուցված են եղել 1960-ական թվականներին և գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում, այլևս պիտանի չէին հետագա շահագործման համար, որի պատճառով հաճախակի առաջանում էին վթարներ, ինչն էլ բերում էր ջրի պղտորվածության և որակի անկման՝ տեղիք տալով բնակիչ-բաժանորդների արդարացի բողոքներին: Աշխատանքների իրականացման ընթացքում վերակառուցվել է $d=160-63-40-50-32-25$ մ, $L=2850$ զմ պլեյ ջրագիծ, շահագործումից հանվել են $d=100-150$ մ $L=3000$ զմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծերը, տեղադրվել է թվով 103 ջրաչափական դիտահոր և թվով 103 $d=20$ մ բրոնզե փական, նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել և վերատեղադրվել է թվով 103 $d=20$ մ ջրաչափական սարք: Կատարված աշխատանքների արդյունքում ք.Մարտունի, Աբովյան փողոցում և Աբովյան փողոցի նրբանցքներում, փակուղիներում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 12-15լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:



Ջրահեռացման համակարգ

«Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Լորիս Մելիքյան փողոց 3 հասցեի $d=200$ մ քայքայված կոյուղագծի $L=12$ զմ հատվածը փոխարինվել է նոր երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները, նվազել են շահագործման ծախսերը:



Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	890
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	29158
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	25412
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2382
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	6
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4804
Կառուցված ջրագիծ	մ	9375
Կառուցված կոյուղագիծ	մ	429.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	12
Փոխարինված փական	հատ	77
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույն	հատ	284
Մաքրված դիտահոր	հատ	1389
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	7.8
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	987
Ջրահեռացման ցանցում	հատ	1259
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Սեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1100	895	912

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է սեպտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքները	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	215	7	1	0	7	0	1	0	0	0	231
Փոխարինված	213	10	13	3	2	5	6	0	0	0	252
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	151	9	0	0	1	5	3	1	3	1	174
Ընդամենը	579	26	14	3	10	10	10	1	3	1	657

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 657 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	տեղ	գծ/մ
1	Արաբկիր	0	236	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	209	6
3	Մաշտոց	0	219	24
4	Շահումյան	0	226	135
5	Շիրակ	0	435	3
6	Արթիկ	0	102	0
7	Ապարան	0	52	0
8	Ալավերդի	0	20	12
9	Աշոցք	0	10	1.5
10	Բերդ	0	10	12
11	Իջևան	0	51	44
12	Լոռի	0	220	40
13	Նոյեմբերյան	0	11	24
14	Սպիտակ	0	13	0
15	Ստեփանավան	0	40	0
16	Թալին	0	17	102
17	Տաշիր	0	4	0
18	Չարենցավան	0	104	0
19	Աբովյան	0	95	0
20	Հրազդան	0	73	84
21	Կենտրոն	145	230	50
22	Հյուսիս	0	285	0
23	Էրեբունի	0	123	6
24	Հարավ	0	124	0
25	Արմավիր	0	168	0
26	Արտաշատ	0	248	0
27	Էջմիածին	0	0	6
28	Աշտարակ	1610	0	15
29	Արարատ	0	55	0
30	Մասիս	0	141	0
31	Գավառ	690	0	8
32	Սևան	1120	0	17
33	Մարտունի	0	0	0
34	Վարդենիս	880	0	0
35	Ճամբարակ	0	0	0
36	Դիլիջան	0	0	33
37	Վայք	340	0	0
38	Եղեգնաձոր	100	0	0
39	Ջերմուկ	205	0	0
40	Սիսիան	0	0	0
41	Գորիս	0	0	7
42	Կապան	1497	137	91
43	Մեղրի	200	60	0
	Ընդամենը	6787	3718	720.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ և ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկը դադարել էր աշխատել: Ձևության արդյունքում պարզվեց որ պոմպի շարժիչը այրվել էր, որն էլ տեղափոխվեց շարժիչների վերանորոգման արհեստանոց վերանորոգման նպատակով: Արդյունքում շարժիչը վերանորոգվեց և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով: Խաբանվել էր նաև GSM հաղորդագրություններ ուղարկող սարքը, որը ևս կարգավորվեց:

- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանն ամբողջությամբ հոսանքազրկվել էր: Ձևության արդյունքում պարզվեց, որ բարձր լարման ապահովիչները այրվել են: Արդյունքում դրանք փոխարինվեցին և այժմ մաքրման կայանն աշխատում է բնականոն ընթացքով:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկի արտադրողականությունը նվազել էր: Պոմպը հորից դուրս բերելուց հետո պարզվեց, որ բանվորական անիվը խցանվել էր, որն էլ մաքրվեց և տեղադրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ևս ապամոնտաժվեցին ու մաքրվեցին և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկի շարժիչն այրվել էր, որն էլ տեղափոխվեց շարժիչների վերանորոգման արհեստանոց վերանորոգման նպատակով: Արդյունքում շարժիչը վերանորոգվեց և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	58,779	16,2
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	66,075	28,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	168,871	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	117,786	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	159,475	18
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,965	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,748	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	7,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	10,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,552	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 345 բակային պոմպակայանում կատարվել են ուսուճասափրություններ, որոնց արդյունքում թվով 252 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.10.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 608,338 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. սեպտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	672,890	579,866	86,2
	Իրավաբանական անձ	31,933	28,472	89,2

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	744,933	598,754	80,4
	Իրավաբանական անձ	37,506	28,085	74,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 515 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4276 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 08.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1995	1451	368	3814
	Իրավաբանական անձ	312	107	43	462
	Ընդամենը	2307	1558	411	4276

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ սեպտեմբեր ամսին փոխարինված 4276 ջրաչափերի մոտ 46 %-ը (կամ 1969 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 238,241 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մեպոտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,655 մլն. դրամ (89 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մեպոտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 175 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 21.9 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.10.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,559	2,860
Բնակիչ-բաժանորդներ	8,143	1,894
Իրավաբանական անձեր	3,416	966

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 362.7 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.10.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	715,125	597,641	83.57	36,450	28,075	77.54
	Առանց ջրաչափի	29,808	1,113	3.73	1,056	10	0.95

Տվյալների բազայում 01.10.2023թ. դրությամբ պլիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	886,626	386,225	43.56	40,163	19.86	19.86

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պլիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5475 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 827 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2458	2015	81.9
գ.Պոռշյան	1691	1158	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5999	1939	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 16974, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 15674, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4235, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5247, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2635, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4224 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7286 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացուցների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուցների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	374	152,359	27,499,694

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա շարունակականության տվյալը կազմում է 96.6%, ինչը 0.5%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 137 ՃԿՓ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուր ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի սեպտեմբեր ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 304 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսը նվազել է 17 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում աճել է 8699 կՎտ.ժ (1.92%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 5 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 5 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 2862 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կլիներ ավել 5837 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 98 էլ. հաշվիչ: Ստուգայցերի ընթացքում պարզվել է, որ «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների կողմից կատարվել են մի շարք խախտումներ, ինչի վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ և գրավոր ներկայացվել է «ՀԷՑ» ՓԲԸ:

Արցախի 8/2 հասցեի պոմպակայանի էլ. էներգիայի ծախսի գրաֆիկի ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա է ջրի արտահոսք, որի վերացնելուց հետո էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական մոտ 1800 կՎտ.ժ-ով:

Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 11,343,578 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 24 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 17 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 345 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 252 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում տասներկու հասցեում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- ▶ Արշակունյաց 48/1 (She-109)
- ▶ Քանաքեռ ԳԷՍ (Ar-48)
- ▶ Մհուր ՕԿՁ (Ar-188)
- ▶ Անդրանիկի 61 (Sh-3)
- ▶ Ազատամարտիկների 72 (Er-25)
- ▶ Արցախի 10 (Er-30)
- ▶ Գյուրջյան 11/4 (Hy-163)
- ▶ Մանանդյան 1/2 (She-54)
- ▶ Նարեկացի 44 (Hy-20)
- ▶ Սուլակ պ/կ (Char-1)
- ▶ Աթոյան 12/3 (Er-10)
- ▶ Բերդավան պ/կ

Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում տասը հասցեում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- ▶ Ագաթանգեղոսի 7 (Ke-6)
- ▶ Էրեբունի 21 (Er-7)
- ▶ Արդոյան 29 (Ar-40)
- ▶ Այգեկ պ/կ (Ejm-8)
- ▶ Կամո 73 (Shir-57)
- ▶ Շիրակացի 54 (Shir-69)
- ▶ Ղրիմյան Հայրիկ 3/5 (Shir-61)
- ▶ Շիրակացի կենտրոնական (Shir-23)
- ▶ Անտառավան 5 թաղ 10ա (Shir-41)
- ▶ Ամիրյան 15 (Ke-10)

Տեղադրված ընդհանուր 81 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ավելացել է 8,238 կՎտ.ժ 4%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 41 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


● 2023թ. սեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 44 905 կՎտ/ժամ (1,47%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 31 129 ԿՎտ/ժ/ամիս կամ 1.27 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 60 766 ԿՎտ/ժամ 0,90 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՐՈՋԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Արարատի մարզի, Սիսավան գյուղի աշխատանքային նախագծի թվայնացում:	գյուղ	1
«Զրային կոմիտեի» կողմից տրամադրված 150 օբյեկտի նույնականացում բազայում առկա տվյալների հետ	օբյեկտ	150
«ՊԿԱԾ» կատարողականների բացակա միացումների ցանկի կազմում	ՊԿԱԾ	1
Սևան և Գավառ քաղաքների ջրագծերի ուղղումներ տեղամասից տրված տեղեկատվության հիման վրա	քաղաք	2
Վարդենիս քաղաքի մի շարք փողոցների կոյուղագծերի թարմացում՝ տեղամասից բերված տվյալների հիման վրա	քաղաք	1
«Գույքի կառավարման վարչության» կողմից տրված թվով 297 ճնշման կարգավորիչների տվյալներ համադրվել և նույնականացվել են «ԱՏՀ» բազայում առկա տվյալների հետ	Ճնշման կարգավորիչներ	297
Սևան, Ապարան, Արմավիր, Վաղարշապատ, Մասիս, Վեդի քաղաքների, Արարատի մարզի Փոքր Վեդի, Նոր Կյանք, Նոր Ուղի, Տափերական համայնքների ջրագծերի հիդրավիկ մոդելավորում	համայնք	10
Կատարվել է թվով 208 տեխնիկական պայմանների թվայնացում	Տեխ. պայման	208
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	82
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	բաժանորդ	203
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2634
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9475
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1813
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1829

3.4. ԶՐԱՏԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Արգնի 1 ջրատարի վրա հայտնաբերվել է ևս մեկ վթար, ահազանգով տեղեկացվել է «Շահագործման տնօրինությանը» ջրատարի վթարի մասին:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «ՀԷՑ» ՓԲ ընկերության շինարարական աշխատանքների պատճառով վնասվել է Գյումուշ 2 ջրատարը, որի արտահոսքը կազմել է 30լ/վ:

Կազմակերպվել է ջրատարի կանգառ, վերջինս վերանորոգվել է՝ «Արաբկիր» ՇՏ-ի աշխատակցիների կողմից:

● Հաշվետու ամսում կատարվել են նաև ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:



Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխկապակցման հետ զուգահեռ Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց, հայտնաբերվեց մի քանի կորած դիտահորեր փականային հանգույցներով և խցափակման արդյունքում շահագործումից հանվեց թաղամասի մի քանի հատվածների հին ջրամատակարարման ցանցի ջրագծեր, մասնավորապես Պ. Սևակ, 11-րդ և Մ. Ավետիսյան փողոցներով պարփակված տարածքը, 13-րդ, Մ. Ավետիսյան և Պ. Սևակ փողոցներով պարփակված տարածքը, 9-րդ, 7-րդ, 5-րդ, Պ. Սևակ և Մ. Ավետիսյան փողոցներով պարփակված տարածքը: Նաև 13-րդ և 15-րդ փողոցները Պ. Սևակ փողոցից մինչև Ե. Չարենց փողոց: Արդյունքում, քայքայված D-150-300մմ ջրագծերի վրա ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո խնայվեց մոտ 30 լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան 8 նրբանցքում, փողոցի վերակառուցմանը զուգընթաց կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց հին, չգործող D=65մմ թուջե ջրագիծ, որը խցափակվեց Շիրակ տեղամասի աշխատակիցների կողմից: Արդյունքում, շահագործումից հանվեց D=65մմ, L=170մ թուջե ջրագիծ, խնայվեց Q = 1,5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Կապս

● Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ նոր կառուցվող Կապսի ջրամբարի տարածքում հայտնաբերվեց և միացման կետում խցափակման եղանակով շահագործումից հանվեց հին չգործող ջրագիծ: Արդյունքում, քայքայված D=100մմ ջրագծի խցափակումից հետո շահագործումից հանվեց L=760մ պողպատե ջրագիծ, խնայվեց մոտ Q=1-2 լ/վ ջրաքանակ:




Քաղաք Սևան

● Սևան տեղամասի կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Նալբանդյան 40 շենքի մուտքագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 3\text{լ/վ}$ ջրաքանակ:





Քաղաք Երևան

● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Նաիրի Զարյան 21 շենքի բակում, $D = 80\text{մմ}$ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 7\text{լ/վ}$ ջրաքանակ:



● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Շիրվանզադե 24/30 հասցեի դիմաց, $D = 80\text{մմ}$ պողպատե ջրագծի վրա: Ներանցման միջոցով կառուցվեց $D = 50\text{մմ}$, $L = 100\text{մ}$ ջրագիծ: Արդյունքում տնտեսվեց $Q = 2\text{լ/վ}$ ջրաքանակ:

● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Մամիկոնյանց 50 շենքի դիմաց, $D = 80\text{մմ}$ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվեց $Q = 10\text{լ/վ}$ ջրաքանակ:



● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Կուրիտաա 46 շենքի բակում, $D = 150\text{մմ}$ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 15\text{լ/վ}$ ջրաքանակ:

● Էրեբունի տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Նուբարաշեն 12-րդ փողոց 6-րդ շենքի մոտ, $D = 300\text{մմ}$ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 7\text{լ/վ}$ ջրաքանակ:



● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Իսահակյան 38 հասցեի մոտ, D=600մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 6լ/վ ջրաքանակ:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Ապարան «Ապարան» քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի կլանիչ ֆիլտրի վրայի մանեկը, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Ապարան «Եզնակ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի զննված դոզատորը:



● Քաղաք Մասիս «Արարատյան» 3/4 քլորակայանում կատարվել է հեղուկ քլորի համակարգի քլորագծի չորրորդ հերթի մոտ զննված մասի խցափակում, որպեսզի հնարավոր լինի ապահովել երրորդ հերթով քլորացում մինչև վթարի վերացնելը:



● Քաղաք Իջևան «Քարքարուտ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով շարքից դուրս եկած հեղուկ քլորի համակարգի ինժեկտորը և վակուում կարգավորիչը փոխարինվել են նորերով:



● Քաղաք Եղվարդ «Բուժական» քլորակայանում փոխարինվել է հիպոքլորիդի հաբի համակարգի դոզավորման պոմպի զննված մեմբրանը և լողանը (պապլավոկ)՝ հիպոքլորիդի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գառնի «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մոնտաժվել է հեղուկ քլորի համակարգի զննված քլորագիծը:

● Հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով Ք. Իջևան «Գետահովիտ» քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի զննված վակուում կարգավորիչը:



● Քաղաք Եղեգնաձոր «Մառնադրյուր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կառուցվել և տեղադրվել է հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչի շարքից դուրս եկած հենակը:




Քաղաք Իջևան «Քարքարուտ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հետադարձ փականի ջարդված մանեկը փախարհնվել է նորով, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 41013 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12190 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9480 զանգ (77.8%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2710 զանգ (22.2%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 28823 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 21564 զանգ (74,8%), իսկ մարզերինը՝ 7259 զանգ (25,2%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2022 Սեպտեմբեր	2023 Սեպտեմբեր	
Առևտրային	Ընդամենը	11722	12190	3.99%
	Երևան	9281	9480	2.14%
	Մարզեր	2441	2710	11.02%
Շահագործում	Շահագործում	24582	28823	17.25%
	Երևան	17175	21564	25.55%
	Արարկիթ	2521	4639	84.01%
	Քանաքեռ-Զեյթուն	1743	1173	-
	Սաշտոց	2502	4084	63.23%
	Շահումյան	1900	2157	13.53%
	Շենգավիթ	2451	2546	3.88%
	Կենտրոն	3042	3303	8.58%
	Հյուսիս/Ավան Լոր Լորթ/	1616	2406	48.89%
	Էրեբունի	1400	1256	-
	այդ թվում կոլոկու վթար	185	243	31.35%
	այդ թվում դիտահորի խցանում	4515	4510	-0.11%
	ՄԱՐԶԵՐ	7407	7259	-2.00%
	Հարավ	3402	3448	1.35%
	Հյուսիս	4005	3811	-4.84%
	այդ թվում կոլոկու վթար	58	59	1.72%
	այդ թվում դիտահորի խցանում	2454	2617	6.64%
	Ընդամենը	36304	41013	12.97%

● 2022թ. սեպտեմբեր ամսվա համեմատ՝ 2023թ. սեպտեմբեր ամսին 3,99%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը և 17,25%-ով ավելացել է շահագործման զանգերի քանակը:

● 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 2023թ. սեպտեմբեր ամսին 31%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 23%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 43%-ով՝ հայտարարությունների լուսուժն ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

● 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 2023թ. սեպտեմբեր ամսին 24,83 %-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մեպտեմբեր ամսվա առաջին կեսին ջրաշինարարական աշխատանքների քանակը, ինչպես ընթացիկ տարվա ՊԿԱԾ-ով, այնպես էլ շահագործման տեղամասերի ու տեխնիկական տնօրինության ուժերով իրականացվողները Հանրային կապերի ծառայության կողմից շարունակվել են լուսաբանվել մեծ տեմպերով: Եվ այդ աշխատանքների արդյունքում, ինչպես նաև եղանակային փոփոխություններով պայմանավորված, նվազեցին ջրամատակարարման հետ կապված սպառողների բողոքները, և տարբեր բնակավայրերում ջրի անբավարարության վերաբերյալ լրատվամիջոցներից ստացվող ահազանգերը:



Ամբողջ հանրապետությունում շարունակվել են ջրագծերի և կոյուղագծերի կառուցման աշխատանքները: Երևանում, Էջմիածնում, Հրազդանում և այլ բնակավայրերում վերակառուցված ջրագծերով շարունակաբար բարելավվել է տարածքների ջրամատակարարման որակն ու տևողությունը:

Դե իսկ ջրագծերի վթարների վերացման աշխատանքները Վեոլիա Ջուր ընկերության շահագործման տեղամասերի ամենօրյա գրաֆիկի հիմնական մասն են, ինչի արդյունքում էլ հնարավոր է եղել տնտեսել մեծ ջրաքանակ: Միայն 2 անգամ վթարվել է Վարդենիս քաղաքը սնող ջրատարը՝ վայրկյանում 20 լիտր ջրի կորստով: Տեղամասի օպերատիվ արձագանքի շնորհիվ, վթարները վերացվել են առանց ջրանջատման: Սակայն, թերևս, սեպտեմբեր ամսվա ամենախոշոր վթարը «Ղազանչի 2» 600 մմ-ոց թուջե ջրատարի վթարն էր՝ վայրկյանում 80 լիտր ջրի կորստով: Այս կարևոր նշանակության ջրատարից են սնվում Շիրակի մարզի Կապս, Վահրամաբերդ, Մարմաշեն, Ողջի, Հայկավան, Ոսկեհասկ, Ախուրիկ, Ղարիբջանյան, Գետք, Երազգավորս, Բայանդուր գյուղերն ու Գյումրի քաղաքի շուրջ 30 տոկոսը: Հաշվի առնելով այս փաստը՝ Հանրային կապերի բաժինը վթարի մասին 2 հրապարակում է արել ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև սպառողներին իրազեկելու համար կազմակերպել ռեպորտաժ մարզային «Ցայգ» հեռուստաալիքով: Սակայն հարյուրավոր սպառողներ երկար անջուր չճանաչեցին, քանի որ հայտարարված ժամից էլ շուտ՝ «Շիրակ» շահագործման տեղամասը կարողացավ վերացնել վթարն ու վերագործարկել ջրատարը: Քիչ չէին նաև Երևանում, Բերդում, Սիսիանում, Գավառում և այլ բնակավայրերում Տեխնիկական տնօրինության Գոտիավորման խմբի հայտնաբերած գաղտնի վթարների վերացման աշխատանքները, որոնց արդյունքում ևս տնտեսվել է մեծ ջրաքանակ, որն էլ ուղղվել է բաշխիչ ցանց խնդրահարույց տարածքների ջրամատակարարումը կայունացնելու համար: Օրինակ՝ Սիսիան քաղաքի Շիրվանգադեի 2ա բազմաբնակարան շենքի խողովակի վթարը վերացվեց խողովակաշարի տվյալ հատվածը փոխելով: Գաղտնի վթարներ վերացվեցին քաղաքի Խանջան, Որոտնեցի, Ծախումյան փողոցներում: Լուծվեց նաև Արմավիրի մարզի Ոսկեհաստ գյուղի խնդիրը, որտեղ ջրագծի վթարված լինելու պատճառով ջուրն ամբողջությամբ տեղ չէր հասնում:



Կոյուղագծերի խցանումների վերացումն ու վթարված հատվածները փոխարինելը նույնպես տեղամասերի ամենօրյա աշխատանքի մի մասն է: Արմվյան քաղաքի Սարալանջ թաղամասի 400 մմ-ոց կոյուղագծի խցանումը վերացնելու համար «Արմվյան» շահագործման տեղամասը աշխատեց մի քանի օր, սակայն կոյուղին այնպիսի մեծ քանակությամբ էր լցված կենցաղային-աղբով, որ այն հնարավոր չէր արձակել: Խնդրի լուծման նպատակով որոշեցին քանդել ասֆալտն ու փոխարինել կոյուղու 3,5 մետր խորության վրա խցանված 30 մետր հատվածը: Ի վերջո, կոյուղատարը բերվեց լիարժեք աշխատանքային վիճակի:

Մեպտեմբեր ամսին որպես ընկերության փաստացի առաջընթացի մասին վկայություն՝ Հանրային հեռուստաալիքը Հայաստանի 1000 խոշոր հարկ վճարողների մասին իր տեսաշարքում, առանձին տեսանյութ հրապարակեց նաև Վեոլիա ջրի մասին: 2023 թվականի առաջին կիսամյակի տվյալներով՝ Ընկերությունը հարկատուների 36-րդ հորիզոնականում է՝ վճարած 3 մլրդ 891 մլն դրամի հարկերով և տուրքերով:



Մեպտեմբեր ամսվա երկրորդ կեսը բարդ ժամանակաշրջան հանդիսացավ ինչպես արցախահայության, այնպես էլ հայ ժողովրդի համար: Արցախում սկսված ռազմական գործողություններն ու ժողովրդի բռնի տեղահանումը իրենց ազդեցությունն ունեցան նաև Հանրային կապերի ծառայության աշխատանքի վրա: Հանրային տրամադրություններով պայմանավորված, մինչև իրավիճակի էական փոփոխությունը, նվազագույնի հասցվեցին համակարգում տարվող աշխատանքների մասին հրապարակումները: Դրա հետևանքով էլ ՀԿԾ կողմից ֆեյսբուքյան էջում արված հրապարակումների թիվը այդ ժամանակահատվածում նվազեց:

Սակայն այդ ընթացքում էլ շարունակվել են ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, ինչպես նաև վթարային և պլանային ջրանջատումների մասին հրապարակումները:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հաշվետու ամսում ՈԱԱ Բաժնի պետը և աշխատակիցը մասնակցեցին Վեոլիա Գրուպի կողմից կազմակերպված «Վտանգի վերահսկում» ԲՌԿ ստանդարտի նոր տարբերակի վերաբերյալ առցանց դասընթացին:

● ՈԱԱ Բաժնի աշխատակիցը մասնակցեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Գոտու կողմից կազմակերպված «Էկոլոգիական վերափոխման ՖՐԵՄԿՈ-ի վարողի ուսուցում» առցանց ՖՐԵՄԿՈ-ին, որը նպատակ ուներ նախապատրաստել դասընթացավարներին «Էկոլոգիական վերափոխման ՖՐԵՄԿՈ» դասընթացի հետագա կազմակերպմանը և իրականացմանը:



● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Մտանդարտների պահանջները և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Բաժինն Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 104 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները և
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 32 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:


- ▶ «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացների/հրահանգավորումների մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացների/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 3 ՋՄԿ-ում, 1 ԿՄԿ-ում, 8 պոմպակայանում և 35 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 25 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուսների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3 ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, հաշվետու ամսում ևս, առաջնորդվելով, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, կազմակերպեց համապատասխան մասնագիտության շուրջ 1250 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննությունները և լաբորատոր հետազոտությունները:

● Բժշկական զննությունները և հետազոտություններն իրականացվեցին ըստ նախապես կազմված պլան-ժամանակացույցի և ավարտվեցին հաշվետու ամսում՝ սահմանված ժամկետում:

● Բժշկական կենտրոնի կողմից սահմանված կարգով իրականացվում են համապատասխան փաստաթղթերի լրացման և Ընկերությանը փոխանցման աշխատանքները:

5.4 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնաժին վթարների կանխարգելմանն և բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում «Պրոմէքսպերտ Գրուպ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացվել են թվով 28 Արտադրական Վտանգավոր Օբյեկտի (քլորակայան, ամբարձիչ սարքավորում, ամբարձիչ հարմարանքով կահավորված ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ, որի շրջանակներում Ընկերությունը իրականացնում է մեծածավալ վերանորոգման, կարգաբերման և այլ աշխատանքներ:

5.5 ԲՈՒԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՈՒԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների պահանջներով, հաշվետու ամսում իրականացրել է թվով 1 Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի (Աշխատանքներ փակ տարածքներում) հայերեն լեզվով թարգմանության աշխատանքներ:

● Միաժամանակ հաշվետու ամսում իրականացվել են Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման թվով 1 ստանդարտի (Աշխատանքներ փակ տարածքներում) ինքնագնահատման աշխատանքներ:

● Միաժամանակ իրականացվում են գնահատված ստանդարտների՝ Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

5.6 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՄՊ-ՆԵՐԻ ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում ևս իրականացվել են ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների կարիքների գնահատման և անհրաժեշտ քանակների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ:



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am